ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

# ԱՐՇԱԼՈՅՍ

ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ

Առաջին երեսում տողը (petite) 6 շահի
Վերջին „ „ 3 շահի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է
Թաւրիզում ամիսը 1,50
Գաւառներում „ 2 ղր.

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆ ԱՐԺԷ 8 ՇԱՀԻ

Հասցէն՝ Redaction „Archalousse" Tauris (Perse) | اداره روزنامه «آرشالوس» تبریز

Խմբագրութեան հետ գործ ունեցողները դիմեն «Դաշնակցական Բիւրօ» Հայկ Խախամեանին

Բ. ՏԱՐԻ № 12 ԿԻՐԱԿԻ 8 ՅՈՒՆԻՍ (26 Մ.) 1919 Թ. Բ. ՏԱՐԻ

Շարունակւում է բաժանորդագրութիւն
Թաւրիզի Հ. Յ. Դ. պատանեկական միութեան օրգան
„ԱՐՇԱԼՈՅՍ"
շաբաթաթերթի
Թաւրիզում ամսական բաժանորդագինն է 1,50
Գաւառներում „ „ 2 ղրան։
Բաժանորդագրուել ցանկացողները դիմեն Աշոտ Մ. Բաղդասարեանին

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

### ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՒ ՄԵՐ ՊԱՐՏՔԸ

Վերսալի Կոնֆերանսի յաջողուած աշխատանքները, վերջնականապէս գալիս են մեզ համոզելու, որ դարերով լօշտուած ու խոշտանգուած Հայաստանն իրականապէս ազատւեց բուրժուա-կապիտալիստական ցեղի կապանքներից։ Այսօր արդէն ուտոպիա չէ, մենք ուրախութեամբ ենք արձանագրում այս տողերը, որ Հայաստանի անկախութիւնը ճանաչուած է վերջնապէս մեծ պետութիւնների կողմից։

Համաշխարհային կոնգրեսների անլուծանելի խնդիրն այժմ դրական փոխանքի է յանգել; գործնական հանգոյցը լուծել այլես։

Եւ այսօր, Հայաստանի ազատութեան արշալոյսին, մեր առջև բացւում են նորանոր աշխատանքներ, աշխատանքներ որոնք հիմքը պիտի կազմեն ապագայ Հայաստանի կուլտուր-քաղաքական ու տնտեսական յառաջդիմութեան։

Դա մեր անգին հայրենիքի վերականգնմանը նւիրաբերելու մեր անդուլ և եռանդուն աշխատանքը պիտի լինի, մեր սուրբ պարտականութիւնը։

Մեզանից իւրաքանչիւրի սուրբ պարտականութիւնը պիտի լինի չխնայել և զոհաբերել ուժերը Հայաստանի ծաղկման սեղանին։ Դա դարերով լօշտուած, դարերով յուսախաբուած մեր երկրի աւանդն է, իսկ մենք պարսկահայերս մեղանչել ենք։

Աւելի ևս մեծ պարտականութիւն է ընկնում մեզ վրայ, երբ քննութեան ենք առնում համաշխարհային պատերազմը։

Դրուած էր հայութեան լինել չլինելու խնդիրը. ամբողջ հայութեան ֆիզիքական գոյութիւնն էր արդէն վտանգուած, հայկական միւս հատուածներն ընդառաջ գնացին կեանքի հրամայականին՝ անզուսպ կռւի ֆիզիքական գոյութեան համար։ Արձագանքը տարածւեց ամենուր, ուր հայութեան բեկորներն էին ցրուած. պարսկահայութիւնը, մանաւանդ պարսկահայ երիտասարդութիւնն անտարբեր մնաց։ Պատրւակներ ի հարկէ շատ կարող են գտնել երիտասարդներն իրենց արդարացնելու համար, անհիմն պատրւակներ. Բայց դա անցաւ, խօսենք ներկայից։

Կարծում ենք, և խորապէս համոզուած, որ այս բոլորից յետոյ այժմ մեր երիտասարդութիւնը վերջապէս պիտի զգայ իր սուրբ պարտականութիւնը և իր ուժերը չի զլանայ Մայր Հայաստանին, իր հայրենիքին զոհաբերելու։

Կարծում ենք այսօր այլեւս երիտասարդութիւնը չի բռնի այն ուղին, ինչ որ տեսանք համաշխարհային հրդեհի ժամանակ, այլ ընդհակառակն իր եռանդուն աջակցութեամբ կապացուցի մեր միւս հատուածներին, որ դեռ չի մեռել պարսկահայ երիտասարդութեան պարտականութեան սուրբ զգացմունքը՝ դէպի իր սիրելի հայրենիքը։

Խաղաղ, կուլտուրական աշխատանք. Ահա մեր հայրենիքի միակ պահանջը. չկայ այլեւս արիւն, վերջակէտ է դրուած դժոխային կռիւներին և թող այլևս չվրդովւեն մեր երիտասարդներն. արիւն չկայ, այլ կուլտուրական մաքուր ու ազնիւ աշխատանք. Ահա բոլորը։

Այս բոլորից յետոյ մեր պարսկահայ երիտասարդութիւնը, յուսով ենք հայրենիքի սեղանին կը նւիրաբերի իր ունեցած ու կարող ուժերը, և անտարբեր չի մնայ դէպի հայրենիքի վերաշինութիւնը։ Նրա յոյսը մենք ենք, երիտասարդ սերունդը, որի մաքուր և ազնիւ հոգու մէջ դեռ ևս արտակարգ փայլով առկայծում է դէպի հայրենիքը ունեցած սուրբ պարտականութեան վառ զգացմունքը։

Մենք կարծում ենք, որ պարսկահայ երիտասարդութիւնն արձագանք կը տայ մայր երկրի կոչին, ինչպէս միշտ, այսօր էլ մենք խորապէս համոզւած և հաւատացած ենք, որ չի մեռել նրա մէջ դեռ հայրենասիրական վառ զգացմունքը և նա այս անգամ գոնէ ընդառաջ կը գնայ իր սուրբ պարտականութեան։

---

### ՁՈՀԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(Մի ֆրանսիացի սֆիցերի օրագրից. Պ. Թուվէնէ)

Այս երկտողս նւիրում եմ էն հերոսների յիշատակին, որոնք զարհուրելի ճանապարհին զոհւեցին Հայաստանի ազատութեան համար...

Նւիրում եմ էն ջահէլ-ջիւան երիտասարդներին, որոնք թողնելով տուն, մայր, աղջիկ քոյր և սիրելի ամուսին, գնացին մեռնելու նւիրած իդէալի համար... Գարնանային պայծառ առաւօտեան սոխակներն Ազատ Հայաստանում կնստեն նրանց շիրիմների վրայ և կերգեն ազատութեան հիմնը։

Օ՜, չկարծէք մարտիրոսները չեն լսի։ Ոչ, նրանք կլսեն և իրենց յաւիտենական բնակարանում մի անգամ. իրենց երկրաւոր կեանքում, ժպտան ու հանգիստ կըպահեն վերջին գնդակը Ազատ Հայաստանին՝ Արքայութիւն գնալու համար։

Իսկ այսօր մենք մեր վանքերում հոգեհանգստեան կը կատարենք, աղօթք կանենք, որ նրանք անպատճառ Արքայութիւն գնան։

Բայց ոչ, ոչ մեր աղօթքը հարկաւոր չէ նրանց... Նրանք կը գնան. մի անգամ ընդ միշտ նրանք Աստծու առաջ մարդկային զոհ են դառել. ոչ հասարակ զոհ... Նման քուրմերին, որոնք էլ, ոչխար էին զոհում Բահաղի առաջ, մարդկային զոհ, մարդկային զոհ...

Անգին հերոսներ, ձեր շիրիմների վրայ մենք մատուռներ կը շինենք, հաւատացէք, ամեն տարի Մայիս 1-ին, ձեռներում խաչգոյնով ծաղիկներ. խունկ ձեզ ուխտի կգանք, կերգենք ձեր հոգու առաջ, աղօթքներ կտարենք դէպ վերև, որ ի սէր Ձեզ, Աստւած մեզ խղճայ ու ներէ. մենք մեղաւոր ենք... Ձեր գերեզմանները գիշերային մթութեան մէջ լուսաւոր աստղերի նման կփայլեն և մենք չենք կորցնի մեր ճանապարհը...

Գիտեմ, մինչև ազատութեան հիմնը, ձեր ոսկորները հանգիստ չեն լինի... մէկ օր, հէնց թէկուզ մայիս մէկին, մարգիկայով կգանք, որ լսէք, մի քանի յաղթական երգեր... ամեն հնչեցնենք դեղին մետաղը, դուք էլ կլսէք, նա էլ կլսի... մինչ այն՝

Մենք գալիս ենք ձեր յաւերժ երգ. ձեզ մի նոր բան պատմելու...

Ա. Մ. Մ.

